



ԾԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆ



նցյալ 1945 թ. հոկտեմբերին վախճանվեց հայ ահանավոր գիտնական աղադեմիկոս Մանուկ Աբեղյանը:

Մանուկ Աբեղյանը մեկն է հայ քանասիրական գիտության խոշորագույն ներկայացուցիչներից: Իր բազմամյա ու անխոնջ գործունեությամբ նա հայկական ֆիլոլոգիան արգասավորեց բազմաթիվ արժեքավոր գործերով, որոնք կարևորագույն ներդրումներ են հայկական կուլտուրայի ուսումնասիրության համար:

Դեռորդյան ճեմարանն ավարտելուց հետո աղադեմ. Աբեղյանը ֆիլոլոգիական հիմնավոր կրթություն է ստանում Ենայի, Լայպցիգի, Բեռլինի և Փարիզի համալսարաններում և փայլուն քննություն բռնելով ու քանասիրական գիտությունների դոկտորի կոչում ստանալով Բեռլինի համալսարանում, վերադառնում է հայրենիք և իրեն նվիրում մանկավարժական ու գիտական գործունեության:

Խոշոր և բեղմնավոր է եղել նրա մանկավարժական գործունեությունը. 1890-ական թվականներից սկսած նա դասավանդել է Դեռորդյան ճեմարանում, Շուշու թեմական դպրոցում, Թիֆլիսի ներսիսյան և Հովնանյան դպրոցներում: Հայաստանի սովետականացիայից հետո Աբեղյանը նոր թափով ու եռանդով դասախոսում է Երևանի նորաբաց Գեոտական համալսարանում, Մանկավարժական ինստիտուտում և այլ ուսումնական հիմնարկներում:

Որպես մանկավարժ Մ. Աբեղյանն աչքի էր ընկնում իր հոգատար վերաբերմունքով դեպի ուսանողությունը: Գրականության ու արվեստի ասպարեզում ներկայումս կան բազմաթիվ աչքի ընկնող գործիչներ, որոնք Մ. Աբեղյանի աշակերտներն են հանդիսացել:

Մանկավարժական գործունեությանը

զուգընթաց Աբեղյանը ծավալել է նաև գիտական խոշոր գործունեություն և հայ պարբերական մամուլում լույս տեսած իր բազմաթիվ գիտական հետազոտություններով հարստացրել ու զարգացրել է հայ գիտական միտքը: Անգնահատելի աշխատանք է կատարել Մ. Աբեղյանը, հատկապես հայ ֆոլկլորի բնագավառում: Նա բազմամյա քրտնաջան աշխատանք ու մեծ եռանդ է հանդես բերել հատկապես Հայկական էպոսի հավաքման և ուսումնասիրության գործում: Աբեղյանը ոչ միայն էպոսի հայտնաբերողներից մեկն է, այլ նաև նրա՝ հայ էպոսի առաջին մեծ տեսաբան-հետազոտողը և մասսայականացնողը: Մեծ գիտնականը շրջել է Հայաստանի զանազան շրջանները, հավաքել էպոսի տարբեր վերիստները, ինքն անձամբ գրի է առել մի նոր վարիանտ և ապա հրատարակել «Սասնա ծռեր» տեքստերի ժողովածուի երկու հատորները: Մեծանուն գիտնականը գլխավորել է նաև «Սասունցի Դավթի» հոբելյանական հրատարակության համահավաք տեքստի խմբագրման աշխատանքները: էպոսի ուսումնասիրության որպես աղբյուր Աբեղյանը իր ժամանակին ապագրել է «Հայ ժողովրդական վեպը» մեծարժեք գիտական աշխատությունը:

Հայ ֆոլկլորի բնագավառում Մ. Աբեղյանը մեծ աշխատանք է կատարել նաև հայկական ժողովրդական առասպելների, գուսանական-ժողովրդական տաղերի կամ հայրենիների ուսումնասիրության վրա և տարբեր ժամանակներում լույս է ընծայել «Դուռնական տաղեր», «Ժողովրդական խաղիկներ», մեծահատոր ժողովածուները և մի շարք այլ ուսումնասիրություններ: Մյուրանցից նշանավոր է «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ» աշխատությունը, ուր մեծ գիտնականը ջանքախիչ քննադատության է ենթարկում Մ. Էմինի, Գր. Խալաթյանի տեսու-

թյունները, որոնք մեր ժողովրդական առասպելները քննում են այլ ժողովուրդների առասպելների ազդեցության ու զուգահեռ բնութագրման տեսանկյունով: Արեղյանն առաջինը եղավ, որ բացահայտեց հայկական առասպելների ինքնուրույն նշանակությունը ու նրանց կապը հայ բնաշխարհի, հայկական իրականության հետ:

Նույնպիսի գիտական արժեքավոր ուսումնասիրություն է և Արեղյանի «Հին դուստնական ժողովրդական երգը» աշխատությունը, որը տպագրվեց Հ. Ս. Խ. Հ. Գիտության և Արվեստի տեղեկագրում: Այդ աշխատության մեջ Արեղյանը պարզաբանում է հին դուստնական - ժողովրդական երգերի ծագման, բրնույթի, զեղարվեստական առանձնահատկությունների հետ կապված հարցերը:

Մ. Արեղյանն է հանդիսանում հայոց լեզվի տաղաչափության առաջին ուսումնասիրողը:

Մ. Արեղյանը երկար ժամանակ զբաղվել է հայոց լեզվի տեսությունամբ ու քերականությամբ: Այդ բնագավառում նշանավոր են նրա՝ «Հայոց լեզվի տեսություն» և «Աշխարհագրի շարահյուսություն» աշխատությունները, որոնք երկար ժամանակ հանդիսացել են որպես դասագրքեր ԲՈՒՀ-երի ուսանողության համար:

Ակ. Արեղյանի գիտական գործունեության հիմնական բնագավառը հայ գրականությունն է հանդիսացել: Նրա «Հայոց հին գրականության պատմություն» երկու ստվար հափտոր աշխատությունը հանդիսանում է նրա գիտական աշխատությունների գլուխ գործընթացը: 1944 թվին ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսավ Մ. Արեղյանի այդ աշխատության առաջին հատորը: Գրքի առաջաբանից պարզվում է, որ հեղինակը ղեկավարում է 1890-ական

թվականների վերջերից մտադրել էր գրելու հայոց հին գրականության պատմությունը, սակայն մի շարք դժվարություններ լուրջ խոչընդոտ են հանդիսացել մեծ գիտնականին շարունակելու և ավարտելու իր այդ հույս կարևոր և մեծարժեք աշխատությունը:


Միայն Սովետական իրականությունը ընձեռեց մեծ գիտնականին առավելագույն հնարավորություններ ավարտելու և լույս բերելու «Հայոց հին գրականության պատմությունը», որը բաղկացած է 2 հատորից: Մահը խանգարեց մեծ գիտնականին ավարտելու երկրորդ հատորի վերջին հատվածը. սակայն Գիտությունների Ակադեմիայի Գրականության ինստիտուտի ջանքերով հաջողվեց հեղինակի սևագրություններից ու «Արարատ» ամսագրում տպագրված նրա ակնարկաշարից լրացնել թերին և վերջերս հրատարակել նաև երկրորդ հատորը:

Հայոց հին գրականության պատմության մարդում անցյալում շարադրված գրքերը (Հ. Գաթրճյան, Ստ. Պալասանյան, Գ. Զարբհանյան, Ա. Զամինյան, Վ. Փափազյան, Գ. Վանցյան) եղել են բացառապես փաստագրական ոչ լրիվ շարահանգիսներ, որոնց

մեջ բացակայել է գրական հուշարձանների հասարակական-գաղափարական բովանդակության ու գեղարվեստական առանձնահատկությունների վերլուծումը, կամ, լավագույն դեպքում դրանք հանդիսացել են դասագիրք-ձեռնարկներ միջնակարգ դպրոցների աշակերտության համար:

Ակ. Մ. Արեղյանի աշխատությունը Հայոց հին գրականության պատմության մասին առաջին ամբողջական գիտական, ընդարձակ շարադրությունն է:

Ակ. Արեղյանի այս աշխատության նշա-



Մ. Արեղյան

նակութիւնն այն է, որ հեղինակն այստեղ տալիս է հայ հին գրականութեան պերթդիզացիան, որը կատարել է ոչ թե ձեռնարկ տեսակետից, այլև ըստ բովանդակութեան, նայելով գրականութեան մեջ արտահայտված պատմական իրականութեանը: Այսպիսով Արեղյանը միանգամայն նոր մեկնաբանութիւն է տալիս մեր հին գրականութեանը: Հենց այդ առաջնութիւնը շեշտված է Կոնստանտին Կոլմից գրքի առաջին հատորին կցված «Երկու խոսքում», որտեղ ասված է հետևյալը. «Եր այս հոյակապ գործում Մ. Արեղյանը բացահայտում է հայոց հին գրականութեան բուն էությունը, նրա շգիւնը և ընդհանուր ուղղութիւնը, դիտելով այն իբրև օտարերկրյա (պարսկական, արաբական և այլն) բռնապետութիւնների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական դարավոր ու անդուլ մաքառումների ու քաղաքական պայքարի մի գրականութիւն»:

Ակադ. Արեղյանը «Հայոց հին գրականութեան պատմութիւնը» բաժանել է չորս հիմնական շրջանի:

Առաջին շրջանն անվանել է «նախնական առասպելապատմական բանահյուսութիւն»: Այստեղ նա քննութեան է առնում հին հայկական առասպելները՝ Հայկ Դրոցազը, Արամ, Տոք Անգեղ, Արա Գեղեցիկ և Շամիրամ, Վահագն միջապաքաղ և ապա անվանական վեպերը՝ Մեծն Տիգրանի, Սանատրուկի, Նրվանդի, Արտաշեսի, Արտավազդի մասին և ընդհանրապես վերլուծութեան ենթարկում վիպասանի արվեստն ու գաղափարական կերպարները: Առաջին շրջանն ընդգրկում է սկզբից մինչև 3-րդ դարը (մ. թ.):

Հայոց հին գրականութեան երկրորդ խոշոր շրջանը Արեղյանն անվանում է՝ «ճկեղեցաքաղաքական մաքառման գրականութիւն» (որն ընդգրկում է 3-րդ դարից մինչև 10-րդ դարը ներառյալ):

Հայ գրերի գլուխը ու հայ գրականութեան սկիզբը համարելով խոշոր քաղաքական իրադարձութիւն հայ իրականութեան մեջ, հեղինակը պարզում է, որ դրանով իսկ սկիզբ է առնում կուլտուրական պայքարը և ճկեղեցաքաղաքական մաքառման գրականութիւնը պարսկական ու հունական ձգտումների դեմ:

Շարունակելով գիտական շարադրանքը Արեղյանը մանրամասնորեն կանգ է առնում առաջին թարգմանիչների ու թարգմանութիւնների (Մ. Գրքի թարգման. և այլն) և ապա հունարան դարցի առաջացման ու նրա նշանակութեան վրա:

«Առաջին հեղինակներ» անվան տակ խոսվում է Մ. Պարթևի, Մ. Մաշտոցի ու Եղնիկ Կողբացու մասին, իսկ՝ «առաջին պատմագիրներ» վերնագրի տակ մանրամասնորեն քննվում է Կորյուն վարդապետի, Ազաթանգեղոսի և Փ. Բուզանդի գործերը:

Հստ Արեղյանի Փավստոս Բուզանդի «Հայոց պատմութեան» մեջ արտացոլվել է «պարսից պատերազմ» ժողովրդական վեպը: Արեղյանը հանգամանորեն պարզում է ժողովրդական վեպի բովանդակութիւնը, հորինվածքը և նրա մեջ տեղ գտած սոցիալ-տնտեսական հարաբերութիւնները:

Բավական մեծ տեղ է հատկացված նաև հայ դասական պատմագիրներին (Մ. Խորենացի, Եղիշե, Ղ. Փարպեցի):

Այնուհետև իբրև գեղարվեստական գրականութիւն, Արեղյանը քննարկում է գրական ստեղծագործութիւնների տարբեր տեսակները՝ վեպաբանութիւններ, դավանական պայքարի գրականութիւն, բանաստեղծութիւն, պատմագրութիւն: Արաբական բռնապետութեան դեմ մղվող պայքարի շրջանի գրականութեան մեջ Արեղյանը կանգ է առնում Դեոնդ պատմագրի ու Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմութեան» վրա:

Ակ. Արեղյանն իր աշխատութեան մեջ հատուկ գլուխ է նվիրում մեր հոգևոր երգերի՝ շարականների ուսումնասիրութեանը, խոսելով նրանց ձևի ու բովանդակութեան մասին:

Գրականութեան պատմութեան երկրորդ շրջանը վերջացնում է այսպես կոչված «նազաղ շինարարութեան դար»-ով: Դա 10-րդ դարն էր, երբ հայ պետականութիւնը նորից շունչ առավ և ժողովուրդն սկսեց խաղաղ կյանք վարել: Ամենից կարևորն այս բաժնում «Գրիգոր Նարեկացի» գլուխն է: Ակ. Արեղյանը խորագնդին վերլուծութեան ենթարկելով Նարեկացու «Մատենան ողբերգութեան» պոեմը՝ այն համարում է համաշխարհային միաստիկական գրականութեան կոթողներից մեկը: Խոսելով «Տաղերի» գեղարվեստական առանձնահատկութիւնների ու տաղաչափական արվեստի մասին Արեղյանը Նարեկացուն, իրավամբ, համարում է հայ առաջին մեծ բանաստեղծը: Սրանով վերջանում է Արեղյանի «Հայոց հին գրականութեան պատմութեան» առաջին հատորը:

Երկրորդ հատորն ընդգրկում է 11-րդ դարից մինչև 19-րդ դարի սկզբի գրաբար բանաստեղծութիւնը: Հայոց հին գրականութեան պատմութեան հերթական երրորդ

շրջանը Արեղյանն անվանում է «Վերածնության գրականություն»։ Նոր մտավոր հոսանքի առաջին փուլերը գրականության մեջ Արեղյանը տեսնում է դեռևս Գր. Մագիստրոսի, Ա. Լատտիլերտցու, Հովհ. Սարկավազ իմաստասիրի, Դավիթ Սարգսյանի որդու ստեղծագործություններում։

Միջնադարյան շրջանի գրականության մեջ նա հանգամանորեն կանգ է առնում Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, առակագիրներ՝ Մ. Դոշի, Վ. Այգեկցու ստեղծագործությունների վրա, բանաստեղծության բնագավառում՝ Ստ. Օրբելյանի, Խ. Կեչառեցու, Ֆրիկի, Հովհաննես Երզնկացու (Պրուզի), Կոստանդին Երզնկացու ստեղծագործությունների և այդ շրջանի տաղերգուներ՝ Մ. Նաղաշի, Քերովակի, Հ. Քլկուրանցու, Գր. Աղթամարցու, Նահապետ Քուչակի, Նաղաշ Հովնաթանի ստեղծագործությունների վրա ու վերլուծում նրանց քերթվածները։

Հայոց հին գրականության վերջին՝ չոր-

րորդ շրջանն ալի. Արեղյանը վերնագրում է «Գրականության նորագույնը 17—19-րդ դարերում»։ Այս շրջանն իր մեջ ընդգրկում է Առաքել Դավրիժեցու, Զաքարիա Սարկավազի և Աբրահամ Կրետացու պատմությունները, Սայաթ-Նովայի, ինչպես և 19-րդ դարի սկզբի Մխիթարյան բանաստեղծների գրաբար ստեղծագործությունները։ Մյուսով Արեղյանը վերջացնում է «Հայոց հին գրականության պատմությունը»։

Մեծ գիտնականը երկու հատորների վերջում զետեղել է բազմաթիվ հավելվածներ, որոնք պարզաբանում են գրականության պատմության հետ կապված մի շարք խնդիրներ։

Իբրև գրականության պատմաբան ալի. Արեղյանը վստայում է իր խորաթափանց մտքով, կուռ տրամաբանությամբ, սկզբունքային համառությամբ, աշխատասիրությամբ և ընդհանրացումների կուռ կարողությամբ։

Ն.

